

կամ՝ երեւելի տունէ՛ր էին աշխարհակալին կամ իր
գաղթեցուցիչ պաշտօնեաներուն ուշադրութիւնը գրա-
ւելու աստիճան: Բայց շատ հաւանական է՝ որ նոր
Ստամպուլի ճոխութիւններով և փառքերով իրենք ու
իրենց գաղթակից արեւմտեան հայերը մշտապէս ը-
սուելու աստիճան երեւելի եղան ու հարստացան ալ
քիչ ատենի մէջ:

Ասոնցմէ շատ առաջ՝ մինչև 5-6րդ դարերուն կը
հասցունէ պատմութիւնն՝ հայերուն դոյութիւնն ի Կ.Պո-
լիս և բաւական քանակութեամբ, 2-3000 ի չափ,
որոնցմէ կարեւոր անձնաւորութիւններ ալ ելած են, և
որոնց մէջ կային անշուշտ վաճառականներ, գիտուն-
ներ, սեղանաւորներ ու հողատէրներ ալ՝ որ քառս կամ
էֆէնդի ըսուեցան, բաւեր՝ մշտապէս նշանակող ըստ
յունական ախորժակի:

Պոլիսի առումէն քսանի մօտ տարի առաջ է Ղա-
լաթիս եկեղեցի շինող Կոմս վաճառականը, որուն հա-
մապատիւ կոմսեր կային անշուշտ այլ առեւտրական
Յոյնացի մէջ, և ժամանակակից ամիրաներուն պէս՝
ունէին իրենց հետեւորդ հայերն ու փոքր կազմակեր-
պութիւն մը տանուտիրական. քայց պատմութիւնը ման-
րաբար ու վաւերաբար շարձանադրեր ասոնք, կամ չէ՛
հասած մեր ձեռքը:

Ուստի գալով Պոլիսի առումին ժամանակները, կը
գտնենք՝ որ հին տուներու հասակոտոր շարունակու-
թիւններէն զատ ի հինն Փոքր-Ասիա, որոնց մեծ մասը
կոչուեցան Իլիւնաւոր, և միւս փոքր մասերը՝ Տէր, Պէյ,
Հօճայ, Աղայ՝ Աշխարհակալ Սուլթան Մէհմէտ Բ. ի
պաշտպանութիւնը վայելող Կ. Պոլիսի Յովակիմ առա-
ջին պատրիարքին հետ 1464ին Պոլիս եկող՝ Պրուսացի,
Գաղատացի, Ամասիացի, Արաբկերցի և ապա Գարա-
մանցի Սամաթիաքնակ՝ հարիւր — հարիւր քսան
տուն հայերէն երեւելիները՝ շնորհիւ նորաշուք պատ-
րիարքութեան ու պետական վստահ յարաբերութեանց,
ստացան՝ իբր անմիջապէս՝ եկ ու տեղական հին հայե-